ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/274

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.10.2021թ. թիվ 26/26-1/17417-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 11.10.2021թ. թիվ 24/1-5/25525ել գրության հիման վրա, 25.10.2021թ. թիվ 26/26-1/17417-2021 գրությամբ նախաձեռնել է «Արքասիմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արքասիմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/274 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.10.2021թ. թիվ 24/1-5/25525ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոց h.11, h.9 և Արցախի փողոց h.10, h.1 բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 100 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված

վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 10.09.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 15.09.2021թ. 24/1-8/211114772ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Արքասիմ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/274 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2021/274 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/274 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքերի կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 100 օրացուցային օր»:

3. Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

4. Երևանի քաղաքապետարանի և «Էյ Վի էն Գրուպ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/51» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

5. Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 10.09.2021թ. թիվ 24/1-8/21/1732ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով Ձեր ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման ժամկետն ավարտվելն է, սակայն աշխատանքները չեն ավարտվել:

Հիմք ընդունելով վերը նշվածը առաջարկում ենք սույն գրությունը ստանալուց հետո սեղմ ժամկետում ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ պայմանագիրը միակողմանի լուծելու մասով»:

6.Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 15.09.2021թ. թիվ 24/1-8/21/114772 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր 09.09.2021թ. /գրանցման համար՝ 21/114772, գրանցման բանալի 2128114/ գրությանն ի պատասխան հայտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի հ.1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամկետն ավարտվել է, սակայն աշխատանքները չեն ավարտվել, ուստի կրկին առաջարկում ենք սեղմ ժամկետում ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ պայմանագիրը միակողմանի լուծելու մասով»:

7. Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2021թ. թիվ 24/1-5/24137ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոց հ.11, հ.9 և Արցախի փողոց հ.10, հ.1 բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 100 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 10.09.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 15.09.2021թ. 24/1-8/211114772ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է

«Արքասիմ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 08.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.10.2021թ. թիվ 26/26-1/17417-2021 գրությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 11.10.2021թ. թիվ 24/1-5/25525ել գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 100 օրացուցային օր»:

Երևանի քաղաքապետարանի և «Էյ Վի էն Գրուպ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/51» ծածկագրով ծառայությունների գման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 10.09.2021թ. թիվ 24/1-8/21/1732ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով Ձեր ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման ժամկետն ավարտվելն է, սակայն աշխատանքները չեն ավարտվել:

Հիմք ընդունելով վերը նշվածը առաջարկում ենք սույն գրությունը ստանալուց հետո սեղմ ժամկետում ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ պայմանագիրը միակողմանի լուծելու մասով»:

Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 15.09.2021թ. թիվ 24/1-8/21/114772 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր 09.09.2021թ. /գրանցման համար՝ 21/114772, գրանցման բանալի 2128114/ գրությանն ի պատասխան հայտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ»

ՍՊԸ-ի միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի հ.1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամկետն ավարտվել է, սակայն աշխատանքները չեն ավարտվել, ուստի կրկին առաջարկում ենք սեղմ ժամկետում ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ պայմանագիրը միակողմանի լուծելու մասով»:

Պատվիրատուն «Արքասիմ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2021թ. թիվ 24/1-5/24137ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոց հ.11, հ.9 և Արցախի փողոց հ.10, հ.1 բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 100 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 10.09.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 15.09.2021թ. 24/1-8/211114772ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Արքասիմ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 08.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1-րդ կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

<u>բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),</u>

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 21.05.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.10.2021թ. թիվ 26/26-1/17417-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արքասիմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**